

տիկայի պրոֆատուղիայում գործող երկու համույթը՝ մեծերի և մանուկների /ղեկավար՝ ակադեմիկոս գիտնական ու բալետմայստեր Ս.Ս.Լիսիցյան/: Պարում էին մեծ թվով ժողովրդական պարեր, մի մասը՝ ղեկավարի բեմական մշակմամբ/ Դնգո, Թամբ-աղայի, Մշո-խրո, Ջայնուկե, Շարանի, Էկեթեծենք սոխն ու սխտոր, Չիպեն, Օյիկ-մոյիկ և այլն/: Ջուզահեռաբար շարունակվեց հավաքչական աշխատանքը /1930-ական թթ. սկզբին Սրբ.Լիսիցյանի, Ապ.Մելիքյանի և Կ.Մելիք-Օհանջանյանի համատեղ գիտարշավը Թալինի շրջան, ուր գրանցվեցին մի շարք նոր պարեր/:

5. 1930-1940-ական թթ. երկրում զգալի թափ ստացավ ժողովրդական ինքնագործ արվեստի պրոպագանդումը՝ կազմակերպվեցին հանրապետական և համամիութենական օլիմպիադաներ ու փառատոններ, որոնցում տարբեր շրջանների պարային կոլեկտիվներ ու մենակատարներ ցուցադրեցին ժողովրդական պարերի բազմաթիվ, համախ մինչ այդ անհայտ նմուշներ: Դրանք հանդիսացան ժողովրդական պարարվեստի ստուգատեսներ՝ ազգագրական ընդգծված յուրատիպությամբ: Ավելի ուշ, սկսած 1960-ական թթ., նորոգի և առավել կատարյալ մակարդակով դրսևորվեց հայ տարբեր ազգազրնական շրջանների ու խմբերի ժողովրդական պարարվեստը:

Մ.Վ.ՀԱԿՈՐԹԱՆ

ՀԱԻ

ԷԹՆՈՔՈՂԱՔԱՆԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ԱՐՑԱԽՈՒՄ /18-19-ՐԻ ԴԴ./

1. Խնդրո առարկայի՝ իշխանության գիտական մանաչման հետ կապված հարցերը ցարդ գտնվել են հիմնականում իրավաբանների ու պատմաբանների ուշադրության կենտրոնում: Մինչդեռ ազգագրագետների ներգրավումը լայն հնարավորություն կընձեռի խորամուխ լինելու հարցի բազմակողմանի քննարկման մեջ, վեր հանելու էթնիկ առանձնահատկությունների դերն ու նշանակությունը բազմէթնիկ միջավայրում:

2. Այս առումով առանձնապես ուշագրավ է Լեռնային Արցախում 18-19-րդ դդ. էթնոքաղաքական իշխանության հետ առնչվող հարցերի պատմա-ազգագրական լուսաբանումը՝ հաշվի առնելով և ի մի բերելով այնպիսի գործոններ, որպիսիք են, ա/էթնիկ միջավայրը, բ/տարբեր տեսեսա-

մշակութային տիպերի առկայությունը, գ/դավանանքային տարբերակումը:

3. Էթնիկ միջավայրը դիտարկելիս առանձնանում է երկու շրջան.

ա/ Արցախում հնուց ի վեր միատարր էթնիկ /հայկական/ բնիկ հոծ զանգվածի առկայությունը, բ/զարգացած և ուշ միջնադարում խաշնարած /թյուրքական/ ցեղերի ավերիչ արշավանքները, որոնց հետևանքները եղավ, արդեն 18-րդ դարից սկսած, այդ ցեղերի աստիճանական ներթափանցումը նույն տարածքը:

Հետագա դարերի ընթացքում այս տարբեր ծագում ունեցող երկու էթնիկ ընդհանրությունների համագոյատևումը և հարևանությունը, նրանց միջև եղած տնտեսա-մշակութային և դավանանքային տարբերությունը պատճառ եղավ երկու հակամետ քեռոների առաջացմանը. ,, այստեղից էլ, նրանց ընդհանուր շահերի հաշտեցման դժվարությունը, ինչպես նաև նրանց կենցաղի կազմակերպման անհնարինությունը միևնույն սկզբունքով'' /հ.Լ.Բախտաձե/:

Ի տարբերություն բնիկ նստակյաց հայերի, որոնց ապրուստի հիմնական միջոցը սիմբիոզ երկրագործա-անասնապահական տնտեսությունն էր, խաշնարած վաշկատուն ցեղերը զբաղվում էին անասնապահությամբ /հատկապես մանր եղջերավոր/ և շարունակ ավարառություն էին անում հարևան երկրագործների դեմ: ,,Այն, ինչ զբրագույն պատուհաս է նստակյաց ժողովուրդների համար՝ մշտական և երկարատև պատերազմները, քոչվորների համար՝ բնական է'' /Վ.Վ.Բարսոկը/:

Էթնոսների տարբերությունը թե տնտեսա-մշակութային առումով, թե հասարակական կյանքում շատ ավելի է խորանում, եթե նկատի առնվեն նաև դավանանքային առանձնատկությունները: Մահմեդականությունը՝ /ի տարբերություն քրիստոնեության/, բնույթով ավելի մարտնչող, հարձակողական նվաճողական է, որի հիմնական դրույթներից է՝ ,,սրբազան պատե - րազմ անհավատների դեմ'':

Աս բնական էր, որպեսզի հայերի հանդեպ կիրառվեր ուժի և բռնությունից առաջ, ընդհուպ մինչև արտաքսում իրենց բնօրրանից կամ Ֆիզիկական բնաջնջում՝ մահմեդականություն չընդունելու դեպքում:

Հաշվի առնելով վերոհիշյալ գործոնները, Լեռնային Արցախի էթնոքաղաքական կառուցվածքում 18-19-րդ դդ. պատմականորեն կարելի է առանձնացնել երեք շրջան.

ա/ Հայկական. հինգ մելիքությունների ռազմա-քաղաքական միաբանությունը՝ որպես էթնո-քաղաքական միասնություն և շահական Պարսկաստանի

կողմից այդ մելիքությունների իրավունքների ժանաչման շրջան,
 ք/հայ-մահմեդական, վերոհիշյալ մելիքությունների միջև եղած տա-
 րածայնությունների ու գծտությունների սրման և Փանահ-խանի գլխավո-
 րած թյուրքական ցեղերի կողմից քաղաքական իշխանության զավթման շըր-
 ջան՝ որպես հետևանք շահական Պարսկաստանի թուլացման,
 գ/ Հայ-մահմեդական-ռուսական. Ղարաբաղը 1813 թ. Ռուսաստանին
 միացվելուց հետո այնտեղ պահպանվեց խանական վարչա-քաղաքական իշխա-
 նությունը, որով ցարական կառավարությունն իրավականորեն ժանաչեց և
 օրինականացրեց այն, սակայն հետագայում, սկսած 1822թ., հաշվի առնե-
 լով խանական իշխանության անուսալիությունը, այն կազմալուծեց և
 սկիզբ դրվեց ռուսական վարչա-քաղաքական կառուցվածքին հատուկ օրենք-
 ների տարածմանը:

Ե.Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԻԱ

,,ՍԱՆՂ" ԲԱՌԻ ԱՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵՒՍԱՊԱՇՏԱՄՈՒՆ- ԲԱՅԻՆ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ

1. Հայերեն ՍԱՆՂ բառը փաստորեն չի ստուգաբանված: Դրա հայկա-
 կան հոմանիշները փոխառյալ բառեր են. ԱՆԿԱՆ /ԱՆԳԱՆ ,սանդ, հավան''
 < առբ. aggānā ,կուժ, ջրաման'', ՀԱԻԱՆ ,սանդ'' < պլ. hāvan
 ,սանդ'', որոնք Լազարոն իբր զրադաշտական պաշտամունքի առարկա
 Հայաստան մտած է համարում: Մորթաղ ,սանդ, հավան'' < Լատին.
 mortarium ,սանդ, հավան'':

Սանդը կենցաղային գործածության կարևոր առարկա է, աշխատանքա-
 յին գործիք և բուն հայերեն անվանման քացակայությունը կամ հավանա-
 կան բուն հայկական անվանման ստուգաբանական-մոտիվացիոն աղբյուրների
 մթազնվածությունը թույլ է տալիս մտորելու այդ իրույթի և դրա ան-
 վան հետ կապված արգելանքի / տաբու/ մասին:

2. ՍԱՆՂ բառի հնչունական կաղապարը, ինչպես նաև կանանց գոր-
 ծընեություն ուղորտի հետ առնչվելը և սննդի ու պողաբերության, հետե-
 վաբար նաև մայր-հողի ու նրա ընդերք-հանդերձյալ աշխարհի հետ պաշ-
 տամունքային-խորհրդանշական կապի հնարավորությունը թույլ են տալիս